

6

ՄԱՅԻՍԻ
2021



ԿԵՆՏՐՈՆԱՅՎԱԾ
ԲԱՆԿԱՅԻՆ ՌԵԵՍՏՐ. ՆՈՐ
ՄԱՐՏԱՀՐԱԿԵՐ ԲԱՆԿԱՅԻՆ
ԳԱՂՏՆԻՔԻ ՀԱՄԱՐ

ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԲԱՆԿԱՅԻՆ ՌԵԵՍՏՐ. ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՂՏՆԻՔԻ ՀԱՄԱՐ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	1
1. ՆԱԽԱԳԾԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ	2
2. ՆԱԽԱԳԾԻ ՍԱՀՄԱՆԱԴԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	3
3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ	5
ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ.....	7

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2021թ. փետրվարի 25-ի նիստում հավանություն տվեց «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին նախագծին (այսուհետ՝ նաև Նախագիծ)¹:

Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը 2021թ. ապրիլի 6-ին դրական եզրակացություն տվեց Նախագծին և առաջարկեց այն ընդգրկել 2021թ. ապրիլի 13-ին գումարվող Ազգային ժողովի հերթական նիստերի օրակարգում՝ առաջին ընթերցմամբ քննարկելու նպատակով:

Նախագծով նախատեսվում է, որ Կենտրոնական բանկը պետք է ստեղծի և վարի բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստր (այսուհետ՝ նաև Ռեեստր), որին պարտադիր պետք է մասնակցեն Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր առևտրային բանկերը:

Ռեեստրը ներառելու է բանկի հաճախորդի բանկային հաշվի համարը, բանկային հաշվի բացման և փակման, բանկային պահատույի տրամադրման և օգտագործման դադարեցման ամսաթվերը, հաճախորդի և հաճախորդի կողմից լիազորված անձի վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև բանկի վերաբերյալ տեղեկությունները:

Նախագծին կից ներկայացված հիմնավորման համաձայն՝ Ռեեստր ստեղծելու անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2019թ. հոկտեմբերի 3-ի թիվ 1332-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ 2019-2022թթ. հակակոռուպցիոն ռազմավարությունից և նպատակ ունի բարձրացնել կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը:

Այդուհանդերձ, Նախագիծը պարունակում է բանկային գաղտնիքի ինստիտուտը զգալիորեն թուլացնող և վտանգող կարգավորումներ, որոնք կարող են խնդրահարույց լինել ինչպես Սահմանադրության 31-րդ հոդվածով երաշխավորված մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի տեսանկյունից, այնպես էլ՝

¹ Նախագիծը հասանելի է ՀՀ կառավարության պաշտոնական կայքում, 2021թ. փետրվարի 25-ի ՀՀ կառավարության նիստի օրակարգ, հարց 27, <https://www.e-gov.am/sessions/archive/2021/02/25/>:

ընդհանուր առմամբ բանկային համակարգի և ներդրումային դաշտի գրավչության տեսանկյունից:

Սույն վերլուծության մեջ անդրադարձ է կատարվում Նախագծով առաջարկվող կարգավորումների իրավական կողմին՝ դրանք դիտարկելով Սահմանադրության և միջազգային փորձի լույսի ներքո:

1. ՆԱԽԱԳԾԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Նախագծի 35.1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախատեսվում է Կենտրոնական բանկի կողմից վարվող Ռեեստրում հավաքագրել Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր առևտրային բանկերի կողմից ներկայացվող հետևյալ տեղեկությունները՝

- 1) բանկային հաշվի համարը, բանկային հաշվի բացման և փակման մասին տեղեկություններ,
- 2) բանկային պահատուփի տրամադրման և օգտագործման դադարեցման ամսաթվերը,
- 3) հաճախորդի և հաճախորդի կողմից լիազորված անձի նույնականացման՝ պետական իրավասու մարմնի կողմից տրված փաստաթղթի տվյալները,
- 4) բանկի վերաբերյալ տեղեկությունները:

Ռեեստրում պետք է ներառվեն նաև մինչև Նախագծի ուժի մեջ մտնելու օրվան նախորդող 5 տարիների ընթացքում վերը նշված հարցերի վերաբերյալ տեղեկություններ:

Նախագծին կից ներկայացված հիմնավորման համաձայն՝ Նախագծի նպատակն է. *«բարձրացնել իրավասու մարմինների՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման արդյունավետությունը, այդ թվում՝ նվազեցնելով բանկերին կատարվող հարցումների քանակը և ապահովելով բանկային գաղտնիք կազմող այլ տեղեկությունների ստացման նպատակով բանկերին կատարվող հարցումների թիրախայնությունը»:*

Ամենակարևորը և խնդրահարույցը, սակայն, այն է, որ Նախագիծը չի կարգավորում Կենտրոնական բանկ և բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու իրավասություն ունեցող մարմինների միջև փոխհարաբերությունները: Նախագծին կից ներկայացված հիմնավորումն էլ, այս առումով, պարունակում է հակասական տեղեկություններ: Մի դեպքում նշվում է. *«Ռեեստրում ներառվող*

հաճախորդի և լիազորված անձի վերաբերյալ տեղեկությունները բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ են, դրանք ստացվելու են նման տեղեկությունների ստացման համար օրենսդրությամբ արդեն իսկ սահմանված կարգով»։ Մյուս դեպքում նշում է, որ «Ռեեստրում ներառվող տեղեկությունների ստացումը պետք է իրականացվի բացառապես Ռեեստրի հարցում կատարելու միջոցով, հետևաբար օրենսդրությամբ արդեն իսկ սահմանված կարգով և պայմաններով տեղեկությունների ձեռքբերման ընթացակարգերը վերաբերելի մասով ենթակա են վերանայման։ Նման կարգավորում ներկայում սահմանված է ՀՀ կենտրոնական բանկի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի միջև՝ համատեղ իրավական ակտով²»։

Նախագծի 35.1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նախատեսվում է, որ Ռեեստրի վարման կարգը, ներառման ենթակա նույնականացման՝ պետական իրավասու մարմնի կողմից տրված փաստաթղթի տվյալների և բանկի վերաբերյալ տեղեկությունների ցանկը, տեղեկությունների (այդ թվում՝ հաշվետվությունների) տրամադրման ձևը և ժամկետները սահմանվում են կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ։

Նախագծով կարգավորված չեն բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ պարունակող Ռեեստրի վարման, դրանից տեղեկությունների տրամադրման կարգի և հիմքերի և այն մարմինների շրջանակը, որոնց այդ տեղեկությունները կարող են հասանելի դառնալ։ Հաշվի առնելով, որ Նախագիծը վերաբերում է Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորված մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին և դրանից ածանցվող բանկային գաղտնիքի իրավունքին, նշված բոլոր հարցերը պետք է կարգավորվեն բացարձակապես օրենքի հիման վրա, այլ ոչ թե Կենտրոնական բանկի խորհրդի որոշումներով։

2. ՆԱԽԱԳԾԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սահմանադրական դատարանը, անդրադառնալով բանկային գաղտնիքի հասկացությանը և հաշվի առնելով նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերաբերելի որոշումները, գտել է, որ **Սահմանադրության 31-րդ**

² «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 13.4-րդ հոդվածի համաձայն՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին վարկային տեղեկատվության կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը չի համարվում բանկային գաղտնիքի հրապարակում։

հողվածի 1-ին մասի իմաստով անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքը ներառում է նաև բանկային գաղտնիքը: Ընդամին՝ բանկային գաղտնիքը պաշտպանվում է պետության կողմից, մասնավորապես, ի դեմս Կենտրոնական բանկի՝ իր հաճախորդ բանկերի կողմից տրամադրված տեղեկությունների մասով, և հենց այդ բանկերի կողմից³:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքից ածանցված բանկային գաղտնիքի իրավունքը կարող է սահմանափակվել միայն Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում⁴ և պետք է համապատասխանի Սահմանադրությամբ նախատեսված որոշակիության (հոդված 79), համաչափության (80) և իրավունքի էության անխախտելիության (հոդված 81) պահանջներին:

Մինչդեռ Նախագծով առաջարկվող կարգավորումների համատեքստում, առաջին հերթին, հստակ չեն Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված այն նպատակը (նպատակները), ի շահ որի Նախագծով նախատեսվում է սահմանափակվել բանկային գաղտնիքի իրավունքը: Նախագծի հեղինակների կողմից ընտրված կարգավորումը, մասնավորապես՝ Նախագծի 1-ին հոդվածը, շատ անորոշ և ընդհանրական կերպով սահմանում է, որ Նախագծի նպատակն է կենտրոնական բանկի գործառույթների իրականացումը և «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ներպետական իրավասու մարմինների հետ համագործակցության արդյունավետության բարձրացումը:

Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ: Նախագիծը, սակայն, մի շարք դեպքերում չի կարգավորում, իսկ որոշ դեպքերում անորոշ կարգավորումներ է նախատեսում բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ պարունակող Ռեեստրի

³ ՍԴԴ-1546, 18 հունիսի 2020, կետ 4.1,

<https://www.concourt.am/armenian/decisions/common/2020/pdf/sdv-1546.pdf>:

⁴ Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

վարման, դրանից տեղեկությունների տրամադրման կարգի և հիմքերի, ինչպես նաև այն պետական մարմինների մասին, որոնց այդ տեղեկությունները կարող են հասանելի դառնալ:

3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ

Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստր ստեղծելու գաղափարը հիմնված է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման նպատակով ֆինանսական համակարգի օգտագործումը կանխելու վերաբերյալ Եվրոպական խորհրդարանի և Եվրոպական խորհրդի 2015/849/EU⁵ և 2018/843/EU⁶ հրահանգների վրա: 2019թ. տվյալներով⁷ բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի համակարգ գործում է Եվրոպական միության անդամ 15 երկրներում⁸:

Հայաստանի Հանրապետությունը Եվրոպական միության անդամ պետություն չէ, այսինքն՝ վերը նշված հրահանգները ուղղված չեն Հայաստանի Հանրապետությանը և չեն ենթադրում վերջինիս կողմից պարտադիր կատարում: Այնուամենայնիվ, եթե այդ հրահանգներով նախատեսված կարգավորումները դիտարկենք որպես Հայաստանի Հանրապետությունում միջազգային փորձի ներդրում, ապա, անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ ի տարբերություն Նախագծով առաջարկվող կարգավորումների՝ հրահանգներով նախատեսվում են մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս ապահովել հավասարակշռություն և երաշխավորել ինչպես վստահությունը բանկային համակարգի նկատմամբ, այնպես էլ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը:

Եվրոպական խորհրդարանի և Եվրոպական խորհրդի 2019/1153/EU հրահանգով⁹ (այսուհետ՝ նաև Հրահանգ) սահմանվում են բանկային հաշիվների

⁵ Directive (EU) 2015/849 of the European Parliament and of the Council of 20 May 2015, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32015L0849&from=GA>

⁶ Directive (EU) 2018/843 of the European Parliament and of the Council of 30 May 2018, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32018L0843&from=EN>, կետ 32a:

⁷ Report from the Commission to the European Parliament and the Council on the interconnection of national centralised automated mechanisms (central registries or central electronic data retrieval systems) of the Member States on bank accounts, COM(2019) 372 final, Brussels, 24.7.2019, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:52019DC0372&from=EN>, կետ 2.1:

⁸ Belgium, Bulgaria, Czechia, Germany, Greece, Spain, France, Croatia, Italy, Latvia, Lithuania, Austria, Portugal, Romania, Slovenia.

⁹ Directive (EU) 2019/1153 of the European Parliament and of the Council of 20 June 2019, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32019L1153&from=EN>:

կենտրոնացված ռեեստրի համակարգում ներառվող տեղեկատվության օգտագործման կանոնները:

Հրահանգի նախաբանում ընդգծվում է մարդու հիմնական իրավունքները հարգելու կարևորությունը, մասնավորապես. «անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը, անձնական տվյալների պաշտպանության իրավունքը, խտրականության արգելքը, տնտեսական գործունեության ազատությունը ... և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան, և դրանց կիրառման համապատասխան ոլորտներում անդամ պետությունների Սահմանադրությունները»¹⁰: Այսինքն՝ այն դեպքում, երբ անդամ պետությունները հանցավորության դեմ պայքարի անհրաժեշտությունից ելնելով պետք է սահմանափակեն մարդու որևէ հիմնարար իրավունք, ապա, նման գործողությունները ևս կաշկանդված են մարդու հիմնական իրավունքները երաշխավորող միջազգային փաստաթղթերով և անդամ պետության Սահմանադրությամբ:

Կարևորելով մարդու հիմնարար իրավունքները՝ Հրահանգով նախատեսվում են.

- Իրավասու մարմինների կողմից ֆինանսական տեղեկատվության և բանկային հաշիվների վերաբերյալ տեղեկատվության հասանելիության և օգտագործման նպատակային խթանում՝ ծանր քրեական հանցագործությունների, այդ թվում՝ նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխման, հայտնաբերման, հետաքննության կամ հետապնդման համար:
- Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրում ներառված ցանկացած անձնական տվյալ պետք է մշակվի իրավասու մարմինների կողմից միայն տվյալների պաշտպանության կիրառելի կանոններին համապատասխան, եթե դա անհրաժեշտ և համարժեք է *ծանր հանցագործությունների* կանխարգելման, հայտնաբերման կամ հետապնդման նպատակներով¹¹:
- Անձնական տվյալների պաշտպանության և մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի պահպանման, ինչպես նաև բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրներում և տվյալների որոնման համակարգերում պարունակվող տեղեկատվության հասանելիության սահմանափակման համար անհրաժեշտ է նախատեսել այնպիսի պայմաններ, որոնք սահմանափակում են այդ հասանելիությունը: Մասնավորապես,

¹⁰ Նույն տեղում, կետ 24:

¹¹ Նույն տեղում, կետ 26:

Եվրոպական միության անդամ պետությունները պետք է ապահովեն, որ տվյալների պաշտպանության համապատասխան քաղաքականությունը և միջոցները կիրառվեն իրավասու մարմինների կողմից անձնական տվյալներին հասանելիությանը միայն *Հրահանգով նախատեսված նպատակների համար*¹²:

- Միայն լիազորված աշխատակիցները պետք է ունենան անձնական տվյալներ պարունակող տեղեկատվության հասանելիություն, որոնք կարող են ստացվել բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրներից կամ նույնականացման գործընթացներից: Նման գաղտնի տվյալների հասանելիություն ստացած աշխատակիցները պետք է վերապատրաստում անցնեն անվտանգության ապահովման մեթոդներին այդ տվյալների փոխանակման և դրանց մշակման վերաբերյալ¹³:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Նախագիծը շոշափում է Սահմանադրության 31-րդ հոդվածով երաշխավորված մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնարար իրավունքից ածանցվող բանկային գաղտնիքի իրավունքը: Այս համատեքստում Նախագիծը խնդրահարույց է հիմնական իրավունքները սահմանափակելու դեպքում Սահմանադրությամբ նախատեսված պահանջների տեսանկյունից. մասնավորապես՝ հստակ չէ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված այն լեգիտիմ նպատակը, ի շահ որի կարող է սահմանափակվել բանկային գաղտնիքի անձեռնմխելիությունը:

Տեղեկությունները, որոնք համաձայն Նախագծի պետք է ներառվեն Ռեեստրում, «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն¹⁴ համարվում են բանկային գաղտնիք և կարող են հրապարակվել կամ տրամադրվել այլ մարմինների միայն օրենքով սահմանված դեպքերում և դատարանի որոշման հիման վրա: Ավելին, «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ

¹² Նույն տեղում, կետ 27:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Բանկային գաղտնիք են համարվում բանկի հաճախորդին սպասարկելու կապակցությամբ տվյալ բանկին հայտնի դարձած հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները, հաճախորդի հանձնարարությամբ կամ հոգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև նրա առևտրային գաղտնիքը, գործունեության ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, արդյունաբերական նմուշի մասին տեղեկությունները և նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել, և բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ:

մասի համաձայն՝ Կենտրոնական բանկը իրավունք չունի պետական մարմիններին, պաշտոնատար անձանց ու քաղաքացիներին կամ որևէ այլ անձի տրամադրել բանկերի վերահսկողության կապակցությամբ բանկերի հաճախորդների վերաբերյալ իրեն հայտնի դարձած բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները:

Նախագիծը չի կարգավորում բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ պարունակող Ռեեստրի վարման, դրանից տեղեկությունների տրամադրման կարգի և հիմքերի և այն մարմինների շրջանակը, որոնց այդ տեղեկությունները կարող են հասանելի դառնալ: Մինչդեռ նշված հարցերը պետք է կարգավորվեն բացարձակապես օրենքի հիման վրա, քանի որ համաձայն Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասի մասնավոր կյանքից անձեռնմխելիության իրավունքը և դրանից ածանցվող բանկային գաղտնիքի իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով:

Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստր ստեղծելու պահանջը նախատեսված է Եվրոպական միության հրահանգներով: Նշված հրահանգները բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստր ստեղծելու անհրաժեշտությունը պայմանավորում են ծանր հանցագործությունների, այդ թվում՝ նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխման, հայտնաբերման, հետաքննության կամ հետապնդման նպատակներով: Բանկային միասնական ռեեստր ստեղծելու և այնտեղ ներառված տեղեկությունները օգտագործելու կանոնները սահմանող հրահանգները հատուկ կարևորություն են տալիս մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիությանը և անձնական տվյալների պաշտպանությանը: Այդ նպատակով սահմանվում է, որ բանկային հաշիվների միասնական ռեեստրում ներառված տեղեկությունները կարող են օգտագործվել միայն ծանր հանցագործությունները կանխելու կամ բացահայտելու նպատակով, ինչպես նաև այդ տեղեկությունները կարող են մշակվել միայն համապատասխան լիազորություն և որակավորում ունեցող մասնագետների կողմից:

Վերը նշվածի համատեքստում պարզ է դառնում, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության և անձնական տվյալների պաշտպանության տեսանկյունից Նախագիծը շատ խոցելի է: Մասնավորապես՝ Նախագծով նախատեսված կարգավորումները լիարժեք չեն և չեն պարունակում անհրաժեշտ օրենսդրական երաշխիքներ, որոնցով արդարացի հավասարակշռում կսահմանվի մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիության պաշտպանության համար՝ մի կողմից և

անհրաժեշտ գործիքներ հանցավորության դեմ արդյունավետորեն պայքարելու համար՝ մյուս կողմից:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: